

ԱՆՄԱՀ ԴԵՐԱՍԱՆԸ

(Հրաչյա Ներսիսյանի մահվան տարելիցի առթիվ)

Առաջին տպավորությունը, որը տիրականորեն մնում էր գիտակցությանդ մեջ Հրաչյա Ներսիսյանին հանդիպելուց հետո, նրա աչքերն էին: Եթերայնորեն կապույտ, արտահայտիչ, չափազանց աշխույժ ու չափազանց եռանդուն աչքեր, որոնք ասես նայում էին հոգու խորքից, այդ հոգու ամբողջ մեծությունը արտապատկերելու համար: Մնացածը լրացնում էր դեմքը, նույնպես արտահայտիչ, շարժուն, քիչ խոժոռ, բայց ուժեղ, շեշտված դիմագծերով, և աչքերի հետ մեկտեղ հոյակապ ամբողջություն կազմող դեմքը: Ու հետո ձեռքերը՝ չորուկ, նյարդային, զարմանալի բարակ ու զարմանալի երկար մատներով, որոնք ամենափոքր հուզմունքի ժամանակ սկսում էին դողալ:

Ամեն ինչ կատարյալ էր նրա մոտ և ամեն ինչ նախասահմանված էր միևնույն վեհ կոչման՝ դերասանության համար:

Պրոտասով – այս դերով սկսվեց Հրաչյա Ներսիսյանի ստեղծագործական կյանքի նոր և, ավաղ, վերջին շրջանը, որն ավարտվելու էր Պաղտասար ախպարի և Մեք Գրեգորի նման գլուխգործոցներով: Իսկ չէ՞ որ մինչև Պրոտասովը ընկած էր երկարատև ընդմիջման գաղջ ժամանակաշրջան, ուր զանազան «բարի մարդիկ» Սունդուկյանի անվան պետական թատրոնի բոլոր առաջատար դերասանների հանդեպ ընդհանրապես և Հրաչյա Ներսիսյանի հանդեպ հատկապես, վարում էին մեղմ ասած «նսեմացնելու» անագործային մի քաղաքականություն: Զբոդոքեց, գրով և բանիվ հանդես չեկավ Ներսիսյանը: Ի դեպ, նա խոսքի, ելույթի մարդ չէր: Բայց խաղաց Պրոտասով: Խաղաց և առավել քան հստակությամբ ցույց տվեց, որ տաղանդին կարելի է նսեմացնել, կարելի է սահմանափակել կամ խոչընդոտել, բայց սպանել – չի կարելի:

Մեղմաբարո, անսահմանորեն սիրելի, ազնիվ ու շիտակ, անկեղծ՝ իր ձգտումների և համեստ՝ ցանկությունների մեջ, հենց դրա համար էլ զոհ, մի տեսակ քավության նոխազ աշխարհի «փողավորների», «ուժեղների», այսինքն՝ լկողների, թալանողների, կողոպտողների համար, – այսպիսին էր Հրաչյա Ներսիսյանի Պրոտասովը: Գույներ էին հարկավոր դերակատարման հաջողության համար, բազմապիսի և նուրբ գույներ, դերասանական խորը բովանդակություն էր հարկավոր Պրոտասովի հարափոփոխ հոգեվիճակը բացահայտել կարողանալու համար: Եվ Ներսիսյանն իր մեջ ուժ գտավ անելու այդ, կերտելու Պրոտասովի այնպիսի մի հոյակապ կերպար, որը հազվագյուտ երևույթ մնաց թատերական արվեստի պատմության մեջ:

Ապա իրար հաջորդեցին դերակատարումները, մեկը մյուսից ավելի հիասքանչ, մեկը մյուսից ավելի վառվռուն ու անկրկնելի: Ասպարեզ եկավ արքա Լիրը, իր մերթ հանդարտ, մերթ մոլեգին, մերթ արքայավայել հանդիսավոր, մերթ խենթի նման անլուրջ ու թեթևսուլիկ, մերթ խորախորհուրդ ու մտացի, մերթ մակերեսային, մերթ վերջապես ծանրաբարո ու մերթ էլ աննյութ խառնվածքով: Շատ թատրոններ կերպեին Ներսիսյանի Լիրն ունենալ, իսկ շատ թատրոններ էլ

նախանձեցին սունդուկյանցիներին «Արքա Լիբի» նման հակասական ու բարդ գործի բեմականացման համար, թեև ներկայացումն ընդհանուր առմամբ քննադատելի շատ կողմեր ուներ: Մամուլը դրվատեց, ընկերներն ու ծանոթները գովասանքի ջերմ խոսքեր շոայլեցին, հանդիսականները ժլատ չեղան ծափերի մեջ, բայց ինքը՝ Հրաչյա Ներսիսյանը դեռ գոհ չէր...

Գոհ չէր, որովհետև այդքան չէին և այդ չէին նրա կարողությունները, նրա ներքին տվյալներն ու ունակությունները: Գոհ չէր, որովհետև նրա տաղանդի փայլատակումները չէին կարող մարմին ստանալ մեկ կամ մի քանի դերակատարմամբ: Հարկավոր էր գտնել համապարփակ, բազմակողմանի, խորապես ազգային և միաժամանակ համազգային մի ներկայացում, հարկավոր էր տաղանդավոր դրամատուրգի տաղանդավոր գործը, որպեսզի հիմնական կերպարի բեմականացման տաղանդավորությունը իրագործեր Ներսիսյանը:

Եվ այդպիսին գտնվեց: Դա եղավ «Պաղտասար ախպարը»: Սունդուկյանի անվան պետական թատրոնը շատ ճիշտ վարվեց, երբ այդ ներկայացումը տարավ Մոսկվա, Հայկական արվեստի տասնօրյակին ներկայացնելու համար: Այլ կերպ էլ լինել չէր կարող: Ներսիսյանի Պաղտասար ախպարը այնպիսի մի կատարում էր, որ կարող էր պարզերես անել միութենական անուն ունեցող ամենախստապահանջ թատրոնին և ամենաբծախնդիր հանդիսատեսին անգամ: Եվ Մոսկվան ոչ թե ծափահարեց Ներսիսյանին, Մոսկվան խենթացավ նրա խաղով: Ներկայացման ավարտից հետո, մի ամբողջ ժամ անկարելի եղավ վարագույրը փակել: Ոգևորված դահլիճը անում էր հնարավոր և թույլատրելի ամեն ինչ, հիացական բացականչությունները ճեղքում էին օդը, ծափահարում էին սանձարձակ ու կատաղի, ծափահարում էին այնպես, ինչպես երբեք, որովհետև ականատես էին եղել մեր ժամանակաշրջանի մեծ դերասաններից մեկի այնպիսի անկրկնելի խաղին, որի նմանը, և սա հայտարարեց ներկայացումը դիտող մեր կառավարության անդամներից մեկը, իրենք երբեք չէին տեսել:

Հետո Երևան. Ներսիսյանը խաղում է Պաղտասար ախպար, իսկ հանդիսականների մեջ է համաշխարհային անուն ու մասշտաբներ ունեցող մի անձնավորություն՝ Վիլյամ Սարոյանը: Մարդկության առաջնակարգ գրողների շարքը դասվող և աշխարհի հռչակավոր թատրոններում բեմադրված Վիլյամ Սարոյանն, իհարկե, այն հանդիսատեսը չէր, որին հեշտությամբ կարելի կլիներ գոհացնել: Եվ Ներսիսյանը հիանալի զգում էր այդ. զգում էր և հուզվում: Ներկայացումը սկսվելուց մի քանի րոպե առաջ, ուրիշների հետ կուլիսներում էի և առաջին անգամ տեսա նրան այդպես հուզված, անհանգիստ: «Հրաչ, յավրում, քուզում, աղվոր պիտի խաղաս» - կես կատակ, կես լուրջ ինքն իրեն դիմեց նա և բեմ մտավ...

Ես շատ եմ տեսել «Պաղտասար ախպարը» և դուք էլ, ընթերցող, հնարավոր է, որ տեսել եք այն, բայց այդպիսի կատարում, վստահ կարող եմ ասել, չեք տեսել: Իսկ ով այդ չի տեսել, նա անդառնալի կերպով շատ բան է կորցրել: Դա գլուխգործոց էր նույնիսկ Հրաչյա Ներսիսյանի համար, դա կատարյալ էր իր կատարելության մեջ: Եվ միթե զարմանալի էր, որ ներկայացումից հետո հանդիսականները հիացմունքի բացականչություններով խուռներամ բեմ լցվեցին, իսկ դահլիճում որոտի նման տարածվում էր բուռն օվացիան: Միթե զարմանալի էր, որ Վիլյամ Սարոյանը, այդ հանդարտաբարո, լրջախոհ մարդը, երեխայի նման ոգևորված անդադար

գրկախառնվում էր Ներսիսյանի հետ, համբուրում էր ձեռքերը և խնդրում, անձկանքով խնդրում, որ առաջիկայում բեմադրեն իր գործերից որևէ մեկը, և խաղա Հրաչյա Ներսիսյանը: Երևանից մեկնելիս էլ՝ նա նորից ու նորից կրկնեց իր խնդրանքը, աճապարանքով ավելացրեց, որ իրենից որևէ բան բեմադրելուն պես անհապաղ «թելեֆոն մը զարնեն իրեն» և ինքն անպայման կգա: Ճակատագրի ինչ տարօրինակ ու չար կատակ էր այդ, որ Վիլյամ Սարոյանի ցանկությունն իրագործվեց, բեմադրվեց նրա «Իմ սիրտը լեռներում է» պիեսը, Ներսիսյանը խաղաց գլխավոր հերոսի՝ Մեք Գրեգորի դերը, հեռագրվեց Վիլյամ Սարոյանին, որը խոստացավ մի քանի հրատապ գործեր ավարտելուն պես անհապաղ գալ, սակայն ճակատագրական կերպով ուշացավ:

Մեք Գրեգորի վրա շատ էր աշխատում: Փորձերից բացի մտքով անընդհատ նրա հետ էր, միշտ խորհում էր նրա մասին, հղկում էր, կոկում: Առհասարակ՝ չափազանցության հասնող խստապահանջություն ուներ ինքն իր նկատմամբ: Իրեն մշտապես թվում էր, որ ինչ որ բան լավ չի ստացվել, ինչ որ բան թերի է, անավարտ, պակաս: «Իմ ամենալավ դերն է, որը դեռ չեմ խաղացել» միանգամայն լրջորեն մի քանի անգամ հայտարարել է նա և հայտարարում էր այն ժամանակ, երբ արդեն խաղացել էր իր բոլոր դերերը: Թերևս այդ խստապահանջությունն էր այն գրավականներից մեկը, որ ստացվեց մի անգուգական ու անհասանելի Մեք Գրեգոր, որ թե գրավոր, և թե բանավոր միայն հիացական բացականչությունների արժանացավ: Ինքը՝ Ներսիսյանն էլ շատ էր հավանում իր Մեք Գրեգորին. մի բան, որ հազվագյուտ էր նրա մոտ: Իր խաղացած բազմաթիվ դերերից նա դրվատանքով էր խոսում մի քանիսի մասին միայն և դրանց մեջ հարգալից երկյուղածությամբ նշում էր Մեք Գրեգորը:

Ով կսպասեր, որ դա լինելու է նրա կարապի երգը...

Կենսասեր, մարդամոտ, պատրաստ օգնելու ուրիշներին և հատկապես իր արվեստակիցներին, անհիշաչար, մշտապես անհանգիստ ու որոնող, խորհող ամենքի և ամեն ինչի մասին - ահա այսպիսին էր Հրաչյա Ներսիսյանը:

Եվ անգուգական այդ մարդու շիրմի վրա արդեն աճել են առաջին դալարները...

Հրաչյա Ներսիսյանը դարձավ այն, ինչ միայն նա կարող էր դառնալ, այսինքն՝ բյուրեղացած հիշատակ:

Եվ այդպես էլ կմնա հավերժ...